ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՆԱՐԵԿ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻՆ

ԶԵԿՈՒՅԱԳԻՐ

Հարգելի պարոն Մելքումյան,

Կից ներկայացնում եմ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության իրավաբանական վարչության փորձագետ Արմեն Դանիելյանի կողմից 2023 թվականի առաջին եռամսյակում (փետրվարի 16- մարտի 31-ը) կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Իրավաբանական վարչության պետ՝ **ՎԱՀԵ ՍԱՐԳՍՅԱՆ**

31.03.2023թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՍՏԻՊ. N 1474
«31.03.2023 թ.

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ ՎԱՀԵ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Իրավաբանական վարչության փորձագետ Արմեն Դանիելյանի կողմից 2023 թվականի առաջին եռամսյակում (փետրվարի 16- մարտի 31-ը) կատարված աշխատանքների վերաբերյալ

1. ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի հրամանով ընդգրկվել եմ մրցույթների գնահատման հանձնաժողովների, առանձին դեպքերում նաև կնքված պայմանագրերի շրջանակներում մոնիթորինգային խմբերի կազմում և կատարել աշխատանքային խմբի գործառույթներից բխող աշխատանքներ:
2. «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին», «Փոստային կապի մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի դրույթների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար Նախարարություն ներկայացված գրությունների համատեքստում կատարվել են իրավական ապահովման աշխատանքներ:
3. Որպես կատարող ուսումնասիրել եմ ինձ մակագրված օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերի փաթեթները, վերջիններիս վերաբերյալ ներկայացրել եմ մասնագիտական և փորձագիտական կարծիք:
4. ՀՀ ռեզիդենտի կարգավիճակ ունեցող իրավաբանական անձանց, անհատ ձեռներեցներին և ՀՀ քաղաքացիներին կամ նրանց ներկայացուցիչներին այդ թվում փաստաբաններին՝ իրենց գույքի կամ գույքային իրավունքների մասին տեղեկատվություն ստանալու, սնանկության դատարան և այլ մարմիններ դիմելու համար ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն) ներկայացված գրություններին տրվել են պատասխաններ կամ դիմող սուբյեկտների գրությունները վերահասցեագրվել են համապատասխան պետական մարմիններ:
5. Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունների շրջանակներում կնքված և նոր կնքվելիք պայմանագրերի նախագծերի ուսումնասիրում և դրա շրջանակներում փոփոխությունների և համաձայնագրերի նախագծերի մշակում:

6. Նախարարության կառուցվածքային այլ ստորաբաժանումների աշխատակիցներին պարբերաբար տրամադրել եմ իրավաբանական խորհրդատվություն՝ իրենց գործառույթների իրականացմանն առնչվող իրավական հարցերի վերաբերյալ:
7. Պատասխանել եմ պետական մարմինների և այլ գերատեսչությունների կողմից Նախարարություն ներկայացված օրենսդրական նախաձեռնությունների այլ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ առաջարկությունների և դիտողությունների մասին պաշտոնական գրություններին, ներկայացրել նախարարության դիրքորոշումը, տրամադրել առաջարկություններ:
8. Ուսումնասիրել եմ Նախարարության՝ որպես պետական բաժնեմասի կառավարումն իրականացնող լիազոր մարմնին պատկանող ընկերություններից մեկի հետ խոշոր ներդրումային ծրագրի ուսումնասիրման աշխատանքներին, տվել եմ առաջարկություններ:
9. Նախարարության կողմից իրականացվող «Մասնագետների պատրաստման բուհ-մասնավոր հատված համագործակցություն» ծրագրի շրջանակներում կառուցվածքային ստորաբաժանմանը շարունակաբար տրամադրել եմ իրավական խորհրդատվություն:
10. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության Իրավաբանական վարչության լիազորությունների կատարման նպատակով այլ հանձնարարականների կատարում:

Իրավաբանական վարչության փորձագետ՝ Արմեն Դանիելյան

31.03.2023թ

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները գնահատում եմ

Իրավաբանական վարչության պետ՝ Վահե Սարգսյան

31.03.2023թ"